ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 632 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 702-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 21-րդ հոդվածով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 702-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) ստեղծել հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող թվային հետախուզության լաբորատորիա բաժին:

2. Որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 40-րդ ենթակետով.

«40) հարկային հսկողության շրջանակներում քրեական, հարկային և վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներով թվային փորձաքննությունների կատարում և եզրակացությունների տրամադրում։».

2) 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27-րդ ենթակետով.

«27) Թվային հետախուզության լաբորատորիա բաժին։».

3) 12-րդ կետի 39-րդ ենթակետի և 28-րդ կետի 26-րդ ենթակետի վերջում «։» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ